ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

«6» մարտի 2012թ
թիվ 24

Հեռ. 0231 6-47-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ղահրամանյան.

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 24-ի թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

22/13-12
«07» 03 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2012թ. — թիվ 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 24-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ.Մկրտումյան | /ստ./ | /ստ./ | |
| Ս. Զաքևոսյան | /ստ./ | /ստ./ | |
| Ն. Գրիգորյան | /ստ./ | /ստ./ | |
| Ա. Բախտավորյան | /ստ./ | /ստ./ | |
| Գ. Իսպիրյան | /ստ./ | /ստ./ | |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան
գ. Մուսալեռ
2011թվականի փետրվարի 24

7 հարց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2012թ. Թիվ 2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով և հաշվի առնելով գույքագրող հանձնաժողովի կողմից կազմված ակտերի օրինականությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ. Մկրտումյան | | /ստ./ | /ստ./ |
| Ս. Զաքևոսյան | | /ստ./ | /ստ./ |
| Ն. Գրիգորյան | | /ստ./ | /ստ./ |
| Ա. Բախտավորյան | | /ստ./ | /ստ./ |
| Գ. Իսպիրյան | | /ստ./ | /ստ./ |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան
գ. Մուսալեռ
2012թվական, փետրվարի 24

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի
ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Առ 22.12.2011թ. դրությամբ

ա/ Մուսալեռի գյուղապետարանի ապրանքանյութական արժեքները կազմում են 80 289 075 /ութանասուն միլիոն երկու հարյուր ութանասունինն հազար յոթանասունհինգ/ ՀՀ դրամ՝ ներառյալ շենք-շինությունները:

բ/ Մուսալեռի գրադարանի ապրանքանյութական արժեքները կազմում են 214567 /երկու հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2012թ. Թիվ 3

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի բնակիչ, 5 անչափահաս երեխաների հայր՝ Էդիկ Թամրազյանի հուղարկավորության հարցերով զբաղվող համձնաժողովի նախագահ Հովհաննես Թովմասյանին տրամադրել 130 000 դրամ՝ հուղարկավորության ծախսերը իրականացնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ. Մկրտումյան | | /ստ./ | /ստ./ |
| Ս. Զաքնոյան | | /ստ./ | /ստ./ |
| Ն. Գրիգորյան | | /ստ./ | /ստ./ |
| Ա. Բախտավորյան | | /ստ./ | /ստ./ |
| Գ. Իսպիրյան | | /ստ./ | /ստ./ |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան
գ. Մուսալեռ
2012թվական, փետրվարի 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24» Փետրվարի 2012Թ. ԹԻՎ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ.Մկրտումյան | | /ստ./ | /ստ./ |
| Ս. Զաքևոսյան | | /ստ./ | /ստ./ |
| Ն. Գրիգորյան | | /ստ./ | /ստ./ |
| Ա. Բախտափորյան | | /ստ./ | /ստ./ |
| Գ. Իսպիրյան | | /ստ./ | /ստ./ |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան
գ. Մուսալեռ
2012թվական, Փետրվարի 24

ՀԱՎԱՆՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 4ՈՐՈՇՄԱՆ

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ

| հ/հ | Նիստի անցկացման ամսաթիվը |
|---|---|
| 1 | 2012 թվականի փետրվարի 24 |
| 2 | 2012 թվականի ապրիլի 25 |
| 3 | 2012 թվականի հունիսի 25 |
| 4 | 2012թվականի օգոստոսի 24 |
| 5 | 2012թվականի հոկտեմբերի 24 |
| 6 | 2012 թվականի դեկտեմբերի 25 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2012Թ. — ԹԻՎ 5-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի երկրորդ մասով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ. Մկրտումյան | | /ստ./ | /ստ./ |
| Ս. Զարևոսյան | | /ստ./ | /ստ./ |
| Ն. Գրիգորյան | | /ստ./ | /ստ./ |
| Ա. Բախտավորյան | | /ստ./ | /ստ./ |
| Գ. Իսպիրյան | | /ստ./ | /ստ./ |

Համայնքի ղեկավար — Է. Հովհաննիսյան

գ. Մուսալեռ

2012թվականի, փետրվարի 24

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի
ԹԻՎ 5-Ն ՈՐՈՇՄԱՆ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի 2011 թվականի եկամուտների և ծախսերի կատարման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի կողմից ներկայացված հաստատված բյուջեների համաձայն՝ 2011թ.-ի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 22818.5 հազար դրամ, եկամուտներ է նախատեսվել 42384.2 հազար դրամ, որից վարչական բյուջեով 39184.2 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեով 3200.0 հազար դրամ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների վարչական բյուջեն եկամուտների մասով կատարվել է 90.0% կամ պլանով նախատեսված 39184.2 հազար դրամի դիմաց կատարվել է 35255.3 հազար դրամ, այդ թվում սեփական եկամուտների գծով 13214.1 հազար դրամ, իսկ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի գծով 22041.2 հազար դրամ:

## Սեփական եկամուտներ՝

Հողի հարկից եկամուտ է նախատեսվել 6500.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 4865.3 հազար դրամ (74.8%):

Գույքահարկի գծով նախատեսվել է 8500.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 6918.0 հազար դրամ ( 81.4%):

Ընդամենը տեղական տուրքեր է նախատեսվել 458.0 հազար դրամ փաստացի գանձվել է 247.4 հազար դրամ ( 54.0%):

Ոչ հարկային եկամուտներ, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ է նախատեսվել 470.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 270.9 հազար դրամ ( 57.6%): Տեղական վճարներ է նախատեսվել 15.0 հազար դրամ:

Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից եկամուտներ է գանձվել 52.0 հազար դրամ:

Այլ ոչ հարկային եկամուտներ է զանձվել 860.5 հազար դրամ:

Համայնքի սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքեր են նախատեսվել 3200,0 հազար դրամ փաստացի զանձվել է 223.4 հազար դրամ :

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 22818.5 հազար դրամ:

ԾԱԽՍԵՐ

*Մուսալեռի գյուղապետարանի 2011 թ. բյուջեով ծախս է նախատեսվել* վարչական մասով 39184.2 հազար դրամ փաստացի ծախսվել է 33983.5 հազ.դրամ ,իսկ ֆոնդային մասով նախատեսվել է 26018.5 հազար դրամ փաստացի ծախսվել է 8943.8 հազ.դրամ:

Վարչական բյուջեով աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ հոդվածներով ծախս է նախատեսվել 18240.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 18199.1 հազար դրամ (99.8 %):

Սոցիալական նպաստներ / սոց. օգնություն / է նախատեսվել 3250,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 3250,0 հազար դրամ (100.0%):

Այլ մշակութային միջոցառումների համար նախատեսվել է 1760.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1131.5 հազար դրամ (64.3%):

Համայնքի աղբահանման, կոմունալ ծառայության ծախսեր է նախատեսվել 2300,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2258.4 հազար դրամ (98.2%):

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման և այլ ծախսերի համար ծախս է նախատեսվել 9234.2 հազար դրամ , փաստացի ծախսվել է 5964.5 հազար դրամ (58.1%):

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին ծախս է նախատեսվել 4400.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 3180.0 հազ.դրամ (72.3%):

Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 26018.5 հազար դրամ, փաստացի ծախսվել է 8943.8 հազար դրամ (34.4%):

Շենքերի և շինությունների կառուցում հոդվածով նախատեսվել է 7500.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 963.0 հազար դրամ (12.8%):

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով նախատեսվել է 8518.5 հազար դրամ, փաստացի ծախսվել է 4843.8 հազար դրամ (56.9%)::

Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր է նախատեսվել 4090,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2542.0 հազար դրամ (62.2%):: :

Նախագծահետազոտական ծախսեր է նախատեսվել 700,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 490,0 հազար դրամ (70,0 %):

Այլ ակտիվների ձեռք բերման ծախսե է նախատեսվել 210.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 105.0 հազ.դրամ (50,0 %):

Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր է նախատեսվել 5000.0 հազար դրամ:

Առաջատար մասնագետ Դ.Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2012թ. ԹԻՎ 6

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի սոցիալապես անապահով թվով 2 բնակչի, բուժման նպատակով թվով 1 բնակչի և հարազատին կորցրած թվով 5 բնակիչների՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ.Մկրտումյան | | /ստ./ | /ստ./ |
| Մ. Զաքնոյան | | /ստ./ | /ստ./ |
| Ն. Գրիգորյան | | /ստ./ | /ստ./ |
| Ա. Բախտավորյան | | /ստ./ | /ստ./ |
| Գ. Իսպիրյան | | /ստ./ | /ստ./ |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան
գ. Մուսալեռ
2012թվականի, փետրվարի 24

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 6 ՈՐՈՇՄԱՆ

## ՑՈՒՑԱԿ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Բավական Ղազարի Սահակյանին՝ 15000 դրամ,
2. Հովսեփ Պետրոսի Զաքնոյանին՝ 15000 դրամ:

## ՑՈՒՑԱԿ

## ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՆԱԿՉԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Ծաղիկ Գևորգի Մելքոնյանին՝ 15 000 դրամ,

## ՑՈՒՑԱԿ

## ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

| 1 | Գումարը ստացողի անուն ազգանունը | Մահացողի անուն ազգանունը և ազգակցական կապը | Գումարի չափը |
|---|---|---|---|
| 1 | Ռուզան Կարապետյան | Ամուսինը՝ Սամվել Աբրահամյան | 35000 |
| 2 | Իսկուհի Մինասյան | Ամուսինը՝ Վարգես Ավետիսյան | 35000 |
| 3 | Մարտիրոս Սարգսյան | Մայրը՝ Լեյլի Սարգսյան | 35000 |
| 4 | Սուրիկ Հարությունյանին | Հայրը՝ Մելիք Հարությունյան<br>Մայրը՝ Գյուլփերի Խաչատրյան | 70 000 |
| 5 | Հովիկ Սահակյանին | Մայրը՝ Կատար Սահակյան | 35000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2012թ. Թիվ 7

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Զիջել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի թվով 2 բնակչի պատկանող ավտոմեքենայի գույքահարկի գումարից՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ. Մկրտումյան | | /ստ./ | /ստ./ |
| Ս. Զաքևոսյան | | /ստ./ | /ստ./ |
| Ն. Գրիգորյան | | /ստ./ | /ստ./ |
| Ա. Բախտավորյան | | /ստ./ | /ստ./ |
| Գ. Խապիրյան | | /ստ./ | /ստ./ |

Համայնքի ղեկավար Լ. Հովհաննիսյան
գ. Մուսալեռ
2012թվական, փետրվարի 27

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 7 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ
# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/հ | Անուն, ազգանուն | Տրամադրվող զիջման չափը/դրամ/ |
|---|---|---|
| 1 | Կարեն Հրաչի Թամազյանին | 109 228 |
| 2 | Անդրանիկ Ալմաստի Արթենյանին | 10 000 |